

գրսեանի թէ ինչու իսիքիոս մէկ անգամ  
 գէթ չի յիշեր ասորական թարգմանութիւնը  
 երբ յունականին զանազան տեսակները  
 իրարու հետ կը համեմատէ և զանց չընել  
 երբայականն ալ վկայութեան կանչելու.  
 մեր կարծեօք « սա թարգմանի յասորի  
 գրոցս » Աստուածաշնչի Յորայ գրոց յա-  
 տելուածին հետ կցուած այդ խօսքին մէջ  
 կարելի չէ ազգութեան ակնարկող յիշա-  
 տակութիւն մը փնտռել, և ս մասնիկը եւ  
 թէ եկամուտ չէ հայերենի մէջ, զուրկ է  
 անշուշտ որ և է նշանակութենէ: Եւ կ'ու-  
 զենք հետեյնել թէ իսիքիոս ապահովա-  
 պէս յունարէն քան թէ ասորերէն գրած  
 է. մեր այս համոզումը կը հաստատեն  
 իսիքիոսի գրուածներուն մինչև ցարդ զըտ-  
 նուած յոյն հատկոտորները. վերը յի-  
 շուած յամենասուրբ Աստուածածինն ճա-  
 որին հայերէն թարգմանութիւնը, և հուսկ  
 Յորայ մեկնութեան թարգմանութեան վրայ  
 ալ տողորուած յոյն բնագրին ազդեցու-  
 թիւնը: Իսիքիոսի ծանօթ բանասէր ար-  
 բայն Batiffol տեսնալով Ղևտական գրոց  
 մեկնութեան լատիներէն միայն մնացած  
 բնագիրը, կը տարակուսի անոր նոյն լե-  
 գուով գրուած ըլլալուն՝ ըսելով. « Ինչու լու-  
 սարանուած խնդիր չէ թէ բնագիրը լա-  
 տիներէն էր թէ յունարենէ թարգմա-  
 նուած »: ուրեմն կը վերջացնենք ըսելով.  
 իսիքիոսի ասորական ծագումն ունեցող  
 փաստերը դեռ կը պակսին:

Իսիքիոսի Յովբայ մեկնութեան մասին  
 ըրած մեր այս տեսութիւնը բաւական պի-  
 տի ըլլայ անշուշտ հաստատելու թէ ստու-  
 գիւ գրական գանձու մը վրայ է որ կ'ու-  
 զենք ուսումնասիրաց ուշադրութիւնը դար-  
 ձնել. որոնց երախտապարտ պիտի մնանք  
 եթէ հաճին մեզ նշանակել ամբողջական  
 օրինակ մը կամ նոյն իսկ հատուածներ  
 գրչագրաց մէջ, վերականգնելու համար  
 մեր մատենադարանին միակ ու հին գրչա-  
 գրին թերի մասերը<sup>1</sup>:

Աւելորդ չենք համարիր սոյն գրչագրին  
 յիշատակարանին մէկ կտորը արտատպե-  
 լու Սիսուանէն (էջ 119), ուր Հ. Ալիշան  
 Բարձրբերդի վրայ խօսած ատեն կարևոր  
 տեսած է յիշատակել ձեռագիրս և անոր  
 գրիչը:

Հ. Բ. ԶԵՐԵՅԱՆ



### Ա Ռ Ժ Ա Մ Ա Յ Ն

Մ Յ Ա Ա Ղ Դ Ե Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Թ

... 1841 1842 ցոգոստ.

Պետրոս առ խոնարհութեան շներէր  
 Յիսուսի գոտան լուանալոյ, ուր ծայրա-  
 գոյն խոնարհութիւնն զայն պահանջէր.  
 Հարկ հղե փոքու խոնարհութեանն փոխել  
 ի հնազանդութիւն և տալ տեղի մեծին:

\*

Վարձս խտացաւ բաժակի միոյ ջրոյ.  
 արդ եթէ Հրէից ի ծարաւել նորա ի խա-  
 չին՝ մատուցեալ էր ջուր, ո՞չ արդեօք ու-  
 դորմութիւն գտանէին:

\*

Սիրտ մանկութեան դիւրավառ է որպէս  
 գյարդ, իսկոյն վառի ի նա հուր հեշտու-  
 թեան, և թէ խուն մի անագանէ՝ ո՞հ, ի  
 սպառ ճարակի և խամրէ:

\*

Ի վաճառսփողոցս սրտի ամենայն վա-  
 ճառք գտանին. մտաց է ընտիր առնել:

\*

Իրբ ժամացոյց կարգեցաք յԱստուծոյ,  
 որոյ արտաքին պահպանակ՝ իրանք են,  
 ճօճանակ սիրտն է կախեալ կարմրալար  
 երակօք, և անխը՝ լեարդին են և այլ  
 գործարանք, ծանրոյք՝ թոքքն, հնչող՝  
 լեզուն, դոնչող՝ կոկորդն, զօզանջ՝ շունչն,  
 ապակի՝ երեսն, ժամացուցակ՝ ճակատն,  
 ժամք՝ խորշումք և զիծք նորին, վայր-

1. Հմտ. An. lit. chrét. 1894, էջ 816.  
 2. Վիսաւորապէս Բ. Կ. և Թ.-Ժ. հատրէն, բաց  
 աստի քանի մը տողեր ու բառեր:

կեանք՝ հերքն, ցուցակ՝ աչքն, լարիչ՝ միտքն, չափ ժամանակին՝ կեանքն, դադարումն՝ մահ, քայքայումն զխակն, եղծումն՝ գերեզմանն, շարժումն վերացեալ՝ հոգին, և տևողութիւն նորա... օր մի անհաստատ ըստ կլիմայից՝ ուրեք կարճ և ուրեք փոքր մի երկար:

\*

Որհաս՝ երկունք, մահ՝ ծնունդ յաւտեանկանութեան:

\*

Ամենընկալ բաժակ է կրից սիրտ, է որ առանձինն հեղանի և է որ միահաղոյն. է որ իջեալ ի խորս անշարժ կայ, և է որ փոփրացեալ ի վեր ցայտէ. այլ յուրվք ի յատակս և յերեսս նորա թողուն զգիրտ:

\*

Սէր՝ հաճութիւն էութեան անձին, որպէս և յԱստուած:

\*

Ամենայն բոյսը ընձիւղին յանգաստանս սրտից, զոր կամիս խլիս և զոր կամիս ոչ:

\*

Բազում անգամ յանտեսութեան աչաց հզօրատես լինին միտք, որպէս ի Հոմեր, յԱսիան, ի Միլտոնն, ի Գոգրիով, ի Վիրգիլ աշակաթ, ի Տրիւլ, ևն:

\*

Լերինք զուրիք են երկրի յորս իջանէ ցօղ օրհնութեան երկնից և անտի ծաւալի յընդհանուր մասունս:

\*

Չինչ քան զաշխատութիւն ծանր, և զինչ քան զհանգիստ քաղցր. այլ սա չկարէ բայց զհետ գալ զառաջնոյն:

\*

Մկանունք ալեաց յարևուն լուսոյ արծաթափայլք, իբրև զբահար զօրականք կուռ զհետ միմանց ի չուս:

\*

Անձուկ են մուտք գերեզմանին, և հանեն ի լայնարձակ ճանապարհս յաւտեանից:

\*

Ժամանակ ծախեալ յօգուտ կարճ է այլ ստղաւէտ. ժամանակ վայրապար՝ երկար է այլ անստղաւ:

\*

Ձինչ էի. զինչ եղէ. զինչ եմ. զինչ կարէի լինել. զինչ կարեմ լինել. զինչ լինելոց եմ:

\*

Յ՛Յ Յուլիսի ի պահու խաւարման արևու. 1842

Արեգակնոց, անդրանիկ երկնից. առ քեզ ակնարկեն բիւր աչկունք լուսաւորեալք առ ի քէն և նսեմացեալք ի խաւարելն քո. յորժամ վարդագոյն վառեալ յառնես ընդ արշալուրջս, յորժամ իշխանական փառօք յայտնիս ի միջօրէի, ոչ որ հայի ընդ քեզ, քանզի յուսան ի քեզ, իսկ այժմ թաղծեալ տրտմին... Ահա խաւար, ահա գիշեր... արևս, արև, ահ, մի փախչիր, թուր ընդ քեզ զաշացս լոյս կորուսանել. . . ահա լուսին դաւաճանեալ արկ զքև գրօղ իւր . . . աստեղք ընդէր յամեն եթէ գիշեր է . . . Ահ, այսպէս ի խաւարել արևուս կենաց՝ աչք որ այժմ չհային ընդ իս՝ դարձցին ընդ իս դարձցին միանգամ . . . Այլ ստուեր լուսոյն զղջացեալ ի քէն ի բաց կայ... և իբրև զճրագ վառիս դու ի կուսէ... և տակաւ անէ լոյսն քո... Մահացուք անդրէն զաչս ի բաց դարձուցանեն... այլ իմ արևուն խաւարելոյ ոչ առաջինն դարձցի լոյս, այլ լոյս սկզբնական, լոյս երեսաց Աստուծոյ. և եղէց ես արեգակն գերծ ի մթարից յաւտեանս...

Հ. Ղ. ԱՄՐԵՍ

Շարայարիկ

Ոչ ոք չատ կը սորվի՝ եթէ շատ չի մտածէ. յարատև մտածելը՝ միակ և հասարակ ճանապարհն է՝ գիտութեան (Թողմինի)

Գիտութիւնը յիմարութիւն է՝ եթէ ողջմտութիւնը զայն չի կառավարէ:

Մարդուս համար իւր սեպհական կամքն անի թունակալ չի կայ: